ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի (այսուհետ՝ Ոստիկանության զորքեր), ի դեմս ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ Հայկ Բաբայանի և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս ռեկտորի Դավիթ Խիթարյանի, այսուհետ՝ Կողմեր,

Հաշվի առնելով, որ Կողմերը ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Ձգտելով զարգացնել համագործակցությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի բնագավառում,

Կարևորելով սպորտի զարգացումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերում որպես մարտունակության բարձրացման լավագույն միջոց,

Վստահություն հայտնելով, որ համագործակցությունը կնպաստի մարզական-սպորտային փորձի փոխանակմանը:

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը պայմանավորվում են համագործակցել Հուշագրով նախատեսված ուղղությամբ՝ իրենց հնավորությունների և միջոցների կիրառմամբ:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Կողմերն իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ պատրաստակամություն են հայտնում կազմակերպելու և իրականացնելու ֆիզիկական պատրաստվածության դասընթացներ՝ համաձայն Կողմերի միջև հետագայում հաստատվող դասընթացի պլանի և ժամանակացույցի, ուսումնակրթական միջոցառումների և համատեղ հետազոտությունների, կոնֆերանսների, սեմինարների և խորհրդակցությունների:

ՀՈԴՎԱԾ 3

Ոստիկանության զորքերում սպորտի և ֆիզիկական պատրաստվածության զարգացման նպատակով Ինստիտուտը կաջակցի գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի տրամադրման հարցում:

ՀՈԴՎԱԾ 4

Համագործակցության շրջանակներում սույն Հուշագրով նախատեսված է Ոստիկանության զորքերի իրազեկումը և Ինստիտուտի հետ քննարկումը.

- փոխադարձ հետաքրքրություններ կայացնող միջոցառումների, այդ թվում՝ համատեղ սպորտային միջոցառումների շրջանակներում կազմակերպվող մարզաձևերի մրցաշարերի անցկացման վերաբերյալ,
- ֆիզիկական պատրաստվածության ծրագրերի մշակման գործընթացում մասնագիտական աջակցության հետ կապված հարցերի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն Հուշագրով արձանագրվածը բարեխղճորեն կատարելու համար՝ ապահովելով իրականացված գործունեության արդյունքում իրենց հայտնի դարձած պետական, ծառայողական, հեղինակային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների չհրապարակումը և չբացահայտումը:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն Հուշագրի անբաժանելի մասը: Այդ արձանագրությունները կիրառվում են սույն Հուշագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 7

7.1. Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

7.2. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

7.2. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

7.3. Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում:

7.4. Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագած տարաձայնությունները կլուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

7.5. Սույն Հուշագրի գործողության դադարեցումը չի ազդի սույն Հուշագրի գործողության ընթացքում սկսված ծրագրերի և նախագծերի կատարման ընթացքի վրա, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Ստորագրված է Երևան քաղաքում 2023 թվականի մարտի -ին:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալ,
գնդապետ Հ. Բաբայան

ՀՀ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր
Դ. Խաչթարյան